



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

32-1
СА 115

ԽԱԿԱ-ԾՊԵՐ

Խ. Դ. ՏԱՎԱՐՅԱՆ



ՊԵՏԱՐԱՍ *

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՆՈՒԱՏԻ
ՁՈՒԹՈՒՅՈՒՆ
Ակադեմիա Խորհ
ՍՍՀ

* 1931
ՅԵՐԵՎԱՆ

13 MAY 2013

Մայդանինով նի նամբորդում

9867

Մի մանկական
Պատկերազարդ գրքուրկ կա.
Վորտեղ փոքրիկ մի տղա
Հեծած քշում և սագին.
Մի ուրիշն ել խեցգետնին:

Մեզ հարցնես՝ սուտ ե այդ.
Սուտ խոսեյն ել վատ ե, վատ:
Խեցգետին շատ աշխարհում,
Բայց խեցգետին չեն նստում:
Սագ վոր՝ բոլորս ենք տեսել,
Միսը կերել ու մարսել
Եեվ բմբուրը լցըել բարձ,
Վոր եղաղես ե, ել ինչ հարց.
Սագ չեն հեծնի, չեն լծի,
Սագը՝ սագ ե, և վոչ ձի:
Յերեխաններ, դուք դատեք,
Պոչով սուտը նկատեք:
Հիմա պատմեմ այս գրքում,
Մարդն ինչով ե ճամբորզում:



891.99 U

ԴԱ. 64

891.99 U


Ծննդը.

30 MAY 2011

Ալ, որինակ, շները հենց
 չաջան, կծան, փոքրիկ ու մեծ.
 Անտեր, անբուն,
 Մինչ իրիկուն,
 Պարապ-սարապ,
 Փողոցներ չափ-չափ,
 Պոչ, գլուխ թափ-թափ
 Անձազ ու նիհար,
 Գզում են իրար
 Վուկորի համար:
 Լավ ե, գեռ շներ ել կան,
 Վորսի լեն գնում մի լերկու անգամ:
 Բայց լսեք թե ինչ եմ ասում.
 Են ձյունոտ հեռու հյուսիսում
 Շներն ունեն ուրիշ աշխատանք. Սովածությունից
 Ճիծտ բանին պիտի հավատանք Մարդու չեն կծում.
 Նախ՝ ունեն բրդոտ մորթի,
 Դիմանում են սաստիկ ցրտի Չուկ, մուկ են ուտում,
 Խոտ չեն արածում,
 Եսկիմոսների համար

Նրանք գանձ են, գանձ.
 Մեծ սահնակներին
 Լծում են նրանց,
 Բեռներ են կրում.
 Առետուր անում,
 Համ հյուր են գնում,
 Համ հյուր ընդունում:





Յնդկարուները

Հիմա այս բանին
Ուշագրությունը ձեր.
Են ցուրտ հյուսիսում
Կան յեղջերուներ.
Նրանց լծում են,
Նրանց հեծնում են.
Մորթուց կարում են
Գյուարկ ու մուշտակ
Ու հազնում տաք-տաք
Բայց տերերը,
Են լոպարները,
Անգութ, անխիղճ են.
Ցեղյերվի ցեղն անշուշտ կջնջեն,
Ցեթե միշա եղաբես կոտորեն նրանց,-
Նրանք սիալ են, սիալ՝ անկասկած.



S 9793-66



Յնդկարուները

Ալ լեզը,
Չալ լեզը,
Քանի բառնամ
Տար, լեզու:
Ուսի են լծում սալերին.




Գոմեշներին, լեզներին,
Փոխազրում ծանր բեռ.
Շատ ուժեղ են, ուժի տեր
ծանրավոտ են, ծանրաքաղ,
Բայց զիտեն շատ զիմանալ:



Իւղալը

Մարդուն պետք ե ուստելիք,
Մարդուն պետք ե խմելիք.
Մարդը ոնից ավելի
Չի դիմանում ծարավի.
Բայց ուղաբերը յոթ-ութ ո՛ը
Ճամբորդում են անկեր, անջուր.
Կրա համար ուղաբերով
Գնում են անապատով.
Նրանք շոգին անձնատուր
Չեն պահանջում իսու ու ջուր.



Դազանանոց վոր զնաս,
Դու զարմացած կմնաս.
Փիղ կտեսնես մեծ վանդակում
Բայց եղաղես չի Հնդկաստանում
Այստեղ փիղ կա ընտանի՝
Մի շատ խելոք կենդանի
Մեջքին տուն են կառուցում.
Կին, յերեխա մեջն ածում,
Հնատանիքով՝ տուն-տեղով
Ճամբորդում են մեծ փղով.
Փիղը ծանը ե ու հանգիստ.
Յեվ դուրս գալը հպարտ, խիստ
Հանդիսավոր։ Այն ե վատ,
Վոր չի կարող ամեն մարդ,
Փիղ ձեռք բերել գինն ե թանգ,
Եղաղես ե ամեն ժամանակ։

Կույի ո հկուի


Դու գեռ փոքր ես, չպիտես.
Ես աշխարհի բանը տես.
Յեզն են լծում հարավում,
Յեղջերուն հյուսիսում.
Փիդ են նստում հնդկացիք.
Ուղար լեզիպտացիք
Ճապոնացի, չինացի
Մարդն են արել կառքի ձի.



Նույն մարդն ե ձի, կառապան
Առած վարձը չնչին բան:
Հոգիդ դուրս գա, ալ կուլի,
Կառքդ հանիր ծուլ-ծուլի.
Հոգիդ դուրս գա, ալ ոփկի,
Կառքդ արագ միշտ քաղի.
Թե չե գըոշ չեն տա քեզ,
Թեկուդ սովից դու սատկես.

Գնացք

Գնացք կա ապրանքատար
Գնացք ել կա մարդատար,
Կտրում, անցնում անդադար
Սարեր, ձորեր, անտառներ
Յեվ այցելում քաղաքներ
Ճամբորդները գնացքով
Շատ եժան ե, շատ ել հեշտ.



Գնալ, գոլը ապահով,
Ուզած տեղդ իջիր միշտ.
Գնացքն ինչ ե — վագոններ
Իրար կպած սենյակներ.
Անիվերը տակ ուղի.
Խելսեր — լերկաթուղի.
Մի մեքենա — շոգեշարժ

Խելսերով՝ արագ, վարժ,
 Անիվսերը գնացքի
 Գլորում և ճշալով,
 Խիստ վրչալով, վնչալով:


 Փղերն ինչ են գնացքի մոտ.
 Թեև չունի այն ձեռ, վոտ,
 Բայց տանում և հազար մարդ
 Ինպես հանգիստ ու հանդարտ:



Եշ մի սատկի, մի տրտնջա,
 Գարունը գա, բունի յոնջա:

 Հայրենիքը — իշխ վաթան
 Աֆրիկան և և Համադան,
 Ղարաբաղն ել մեր Կովկասում:
 Եշն անպաշտան մի անասուն
 Համբերություն փոր շատ ունի.
 Ինչ կեր ել տառ՝ նո կընդունի:
 Կըճոն դարձան, խոտի տեղ փուշ.
 «Եշն ինչ գիտի ինչ բան և նուշ
 Ենքան կեր տուր, փոր չմեռնի.
 Ինչքան կուզես ծանր բեռնի.
 Փալոն ել սրի՝ իշխն բգի»:
 Բա, իշատեր, քեզ կսազի.
 Դեհ, զու ասա, եղ ել խիղճ ե.
 Զե, անասուն եշն ել խեղճ ե:
 Նըան հիմար մի համարի,
 Կեր տուր, ջուր տուր, լավ թիմարի.
 Հետո լծի հետո բարձի.
 Թեթև դնա. թեթև դարձի

Հիմրը



Արեւելքում և հարավում
Շատ մեծ տեղ ե ձին գրավում.
Մեր կովկասում—Ղարաբաղի,
Աֆրիկայում—Արարիայի
Զիաները շատ են հայտնի.
Երանց ցեղը թող չհատնի.
Բարեկազմ են ու վայելուչ,
Խելացի լեն ու աշալուրջ,
Արագաշարժ,
Վաղելում վարժ:
Զիաներով հող են վարում,
Զիաներով բեռ են կրում,
Զիաներին կառը են լծում,
Զիաներին թամբում, սանձում,
Մեջքին նստում ու ճամբորդում
Պետքական և միշտ ձին մարդուն.

Ծովենակը



Աշխարհում շատ գետ ու ծով...
Բայց ջուր չեն մտնում գնացքով:
Ջրի համար կա շոգենավ,
Գնացքից ել գեռ շատ լավ,
Շատ վիթխարի, շատ հսկա,
Շոգենավում—ինչպես տանդ քեզ զգա.
Անցիր գետ, ծով, ովկիանոս...
Ել ինչ գնացք,
Ի՞նչ սար ու ձոր, դար ու փոս.
Շոգենավով քեզ հետ տար
Հազար, հազար փութ պաշար
Ալյուր, բրինձ, լուղ, ձուկ, միս
Հենց տարին—տասներկու ամիս:

Կիւրոն ու պրամինյօց

Զին չի թռշում: Հիսու, ալ,
Ավտոմոբիլ, տրամվայ:



Կեր ու խնամք չեն պահանջում,
Վոչ տանջվում են, վոչ տանջում.
Հոգնել չունեն, գնա նստի.
Միշտ ել տեղ կա պատրաստի

Զիու տեղ բանում ե մեքենա,
Զին նրա չափ չի գնա.
Տրամվալը մի ժամում
Քսան վերստ ե միշտ անում:
Իսկ ավտոն մոտ հարլուր, —
Ել ուր մնաց ձին, ել ուր:



Պղանակ



Մեքենան հո թռչուն ե,
Թեեր չունի՝ թռչում ե.
Ման ե գալիս նա ոդում
Ու ամեն կողմ պարտում:



Ողանավն ել թռչում ե,
Բայց յերթեմն ել իշնում ե,
Վոր վառելիք վեր հանի,
Ավանս շատ մարդ չի տանի.
Լավ կլինի, ինչքան լավ,
Վոր մարդ նստի ոդանավ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0399756

41650ЧМ.

9867

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՂ ԿԱՆԱՔ
ԽՄԴՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՂ ԿԱՆԱՔ
ԽՄԴՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՂ ԿԱՆԱՔ

ХИКО АПЕР
НА ЧЕМ ЧЕЛОВЕК
ПУТЕШЕСТВУЕТ
113. с.с.р.а. ЭРИВАМЬ 1931

